

ՊԱՐՏՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՓՈԽՈՒՄ

Բորիս ԱՎԱԳՅԱՆ

տնտեսագիտության թեկնածու

Բանալի բառեր. պարտք, վարկ, պետական պարտք, պարտքի մարում, ընթացիկ հաշիվ

1. «Պարտք» հասկացությունը տնտեսական հարաբերությունների համակարգում: «Վրդի տնտեսագիտության տեսության բառարանում» պարտքը բնորոշվում է որպես պարտավորություն, որը ծագում է դրամական գումարների փոխառությունների արդյունքում կամ էլ վարկով ապրանքների կամ ծառայությունների ստացման ժամանակ: Կախված գործարքի կնքման պայմաններից՝ պարտքի ձևերի մեծ մասը նախատեսում են տոկոսների վճարում որոշակի ժամանակահատվածում և, սովորաբար, ունեն պարտքի մարման սահմանված ժամանակահատված (կամ ժամանակահատվածներ, եթե նախատեսված է պարտքի մասերով մարման ընթացակարգ): Պարտքի կարևոր տեսակները, օրինակ պետական պարտքը, կարող են ունենալ շուկայական ձև, այսինքն դրանք կարող են որոշակի շուկաներում, ինչպես օրինակ, ֆոնդային բորսաներում, գնվել և վաճառվել¹:

Պարտք հասկացությունը ուղղակի առնչություն ունի վարկ հասկացության հետ, բառեզր, որը լայնորեն օգտագործվում է գործառնությունների ժամանակ կամ էլ այնպիսի իրավիճակների համար, որոնք կապված են փողի հատկացման (տրման) հետ, սովորաբար կարճատև ժամանակահատվածում: «Վարկ տրամադրել» նշանակում է ուղղակի կամ անուղղակի ֆինանսավորել մյուսների (ֆիզիկական կամ իրավաբանական անձանց) ծախսերը՝ ապագայի որոշակի ժամանակահատվածում դրանք ետ ստանալու պայմանով: Փողի այդպիսի տրամադրումը կամ «ֆինանսավորումը» ուղղակի է, եթե, օրինակ, բանկը իր հաճախորդին տրամադրում է օվերդրաֆտ, որը նա հետագայում օգտագործում է իր գործունեության ընթացքում: Վարկը տրվում է անուղղակի, եթե վաճառողը կամ արտադրողը ապրանքները մատակարարում են «վարկով», այսինքն ապագայի որոշակի ժամանակահատվածում վճարելու պայմանով: «Ստանալ վարկ» նշանակում է կա՛մ հնարավորություն ձեռք բերել գնելու ապրանքներ՝ առանց դրանց անհապաղ վճարմանը, կա՛մ էլ հնարավորություն տալ փող ստանալ վարկավորող կազմակերպությունից: Դրամավարկային տեսությունում «վարկ» բառեզրը հաճախ նշանակում է փողի տրամադրման (տրման) այնպիսի ձևեր, որոնք ստեղծում են փողային էֆեկտներ, կամ էլ առաջ են բերում դրամական զանգվածի աճ, երբ բանկերի

¹ Словарь современной экономической теории Макмиллана (перевод с английского)– М.: ИНФРА-М, 2003, с. 119.

վարկերի աճող ծավալները հանգեցնում են բանկային ավանդների (դեպոզիտների) ծավալների աճի, կամ էլ ավելացնելով փողի այդպիսի փոխարինիչների ծավալը, ինչպիսին առևտրական վարկն (trade credit) է: Փողի և վարկի միջև այդ կապը առավել անմիջական դրսևորվում է մակրոտնտեսական մակարդակում, երբ դրամական զանգվածի փոփոխությունները բացատրվում են երկրի ներսում վարկային էքսպանսիաներով:

Վարկատուները (կրեդիտորները) մասնավոր անձինք են կամ կազմակերպություններ, որոնք փող (փոխառություններ) են տրամադրում փոխառուներին (վարկառուներին), նրանց այն պարտավորությունների դիմաց, ըստ որի վերջիններս համաձայնվում են տարեկան փողի որոշակի գումար որպես տոկոս վճարել և ապագայի որոշակի ժամանակահատվածում վերադարձնելու փոխառության հիմնական գումարը:

Օգտագործվում է նաև «լողացող պարտք» հասկացությունը, որը պետական պարտքի մի մասն է կարճաժամկետ արժեթղթերի տեսքով: Հաճախ ընթացիկ պարտավորություն հասկացությունը ընկալվում է որպես պետական պարտքի այն մասը, որը տրամադրվում է գանձապետական մուրհակների (treasury bills) միջոցով: Այդ պարտքը «լողացող» է, քանի որ այն անընդհատ փոքրանում է մարումների հետևանքով: Եթե բյուջեում եկամուտները չեն գերազանցում ծախսերին կամ էլ բացակայում են ավելի երկարաժամկետ պարտքային պարտավորությունների վաճառքից եկամուտները, ապա ընթացիկ պարտավորությունների մարումը պահանջում է նոր կարճաժամկետ պարտքի ձեռքբերում կամ դրամի թողարկում (էմիսիա):

Փոխառու ֆինանսավորում (debt finance) բառեզրը օգտագործվում է երկու տարբեր նշանակություններով, սակայն այդ երկու նշանակությունները ենթադրում են փոխառություն: Այդ հասկացությունը կարող է վերաբերել ընկերությունների կողմից իրենց գործունեության համար երկարաժամկետ փոխառությունների օգտագործմանը, հատկապես կապիտալ ներդրումների (capital expenditure) ձևով: Այս դեպքում կապիտալի ընդհանուր արժեքը կարող է նվազեցվել պարտքի օգնությամբ: Կառավարությունները նույնպես փող են պարտք վերցնում իրենց գործունեության իրականացման, ինչպես նաև տնտեսական ակտիվության ընդհանուր մակարդակի, որպես կանոն, բարձրացման և կարգավորման հեշտացման համար: Այդպիսի փոխառությունը իր մեջ ընդգրկում է կարճաժամկետ և երկարաժամկետ արժեթղթերի թողարկում: Տնտեսության անկման փուլում, ինչպես հաստատում են քեյնսիական տեսության կողմակիցները, պետությունը պետք է պատրաստ լինի բյուջետային պակասուրդի (դեֆիցիտի) և տնտեսության խթանման նպատակով ավելացնելու իր պարտքային պարտավորությունները: Աշխարհի զարգացած երկրներում լայնորեն տարածված է պարտքային պարտավոր-

րությունների մարումը ընկերությունների բաժնետոմսերով: Կարգավորման այս մեթոդի կիրառման իմաստն այն է, որպեսզի նվազեցվի պարտքի ծանրությունը (բեռը): Սկզբնապես այս մեթոդը կիրառվել է զարգացող և, հատկապես, Արևելյան Եվրոպայի նախկին համայնավարական երկրներում: Պարտքային պարտավորությունների մարումը ընկերությունների բաժնետոմսերով թույլ է տալիս պարտքը վերափոխել փոխառության, որը տրվում է կամ կազմակերպությանը և կամ էլ կառավարությանը (պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների դեպքում) բաժնետոմսերի տիրապետման դիմաց: Բանկի առևտրային փոխառությունը ընկերությանը կարող է վերափոխել այդ ընկերության բաժնետոմսերի տնօրինմամբ: Ըստ որում նման դեպքերում ընկերությունը ազատվում է փոխառու կապիտալը հետ վերադարձնելու պարտավորությունից, վարկատուն, օրինակ հնարավորություն է ստանում փոխարինել անհուսալի փոխառությունը շահութաբաժինների ստացմամբ, իսկ հետագայում՝ նաև բաժնետոմսերը: Կառավարությանը փոխառություն տալիս պարտքը կարող է վաճառվել ազգային արժույթով՝ ձեռքբերված բաժնետոմսերի ֆինանսավորման համար:

Հնարավոր է նաև պարտքերի մարումը պարտքերի միջոցով, երբ սկզբնական պարտքը փոխարինվում է դրա ավելի «թեթև» ձևերով, օրինակ, միջազգային արժույթով պարտքը վերափոխվում է ազգային արժույթով պարտքի և դրա սպասարկումը (այդ փոփոխությունից հետո) կարող է իրականացվել ազգային արժույթով: Պարտքերի մարման բնաիրային ձևերից մեկը պարտքի մի մասի վերափոխումն է ներդրումների, որոնք ուղղված են շրջակա միջավայրի պաշտպանությանը: Այս դեպքը առավել հաճախ հանդիպող այն կապի արտացոլումն է, որը առկա է զարգացող երկրների պարտավորությունների և շրջակա միջավայրի վատթարացման գործընթացի միջև, որի հետևանք է ներդրումներ ընդունող երկրների կողմից նման առաջարկ ներկայացնելու և պայմանավորվող մյուս կողմի համաձայնության դեպքում:

Պարտքի կառավարումն հասկացությունը առավել հաճախ օգտագործվում է պետական պարտքի հետ կապված հարաբերություններում նշելու այն գործողությունները, որոնք իրականացվում են պարտքային պարտավորությունները թողարկողի կամ նրա անունից գործող կենտրոնական բանկի կողմից չմարված պարտքի չափերը և կառուցվածքը կարգավորելու համար: Այդպիսի կառավարումը ներառում է թողարկվող պարտքային պարտավորությունների ձևի որոշման ընդունումը (այսինքն դրանք լինելու են կարճաժամկետ կամ երկարաժամկետ, շրջանառվող, թե չշրջանառվող), ինչպես նաև թողարկման պայմանները, օրինակ, նոր թողարկման կուրսը, դրա եկամտաբերության դրույքաչափը, մարման ժամկետները և այլն: Պարտքի կառավարման կարևոր նպատակներից է պարտքի ժամանակավոր կառուցվածքի

հսկողությունը, օրինակ, կարճաժամկետ պարտավորությունը երկարաժամկետի փոխարինելու օգնությամբ: Ինչպես ցանկացած երկրի, այնպես էլ ՀՀ պետական պարտքի կառավարումը ունի կարևոր նշանակություն երկրի դրամական զանգվածի (money supply) կառավարման համար, նկատի ունենալով դրա զգալի և անընդհատ աճող մեծությունը և դրանց մարման որոշակի ժամկետները: Պարտքառու-երկիրը մյուս երկրների հետ հարաբերություններում զուտ փոխառու է կամ էլ օտարերկրյա կազմակերպություններից ներդրումներ ստացողն է և այդ պատճառով ունի պարտքի կուտակված ծավալ և այլ պարտավորություններ մյուս երկրների հանդեպ: Այդպիսի երկիրը իր օտարերկրյա պարտքերի սպասարկման կամ օտարերկրյա ընկերությունների շահույթի «շահութաբաժինների հայրենադարձության» համար պետք է կարողանա ստեղծել վճարային հաշվեկշռի մյուս հոդվածների, օրինակ, ընթացիկ հաշվի, դրական մնացորդ (սալդո): Պարտքի չափաքանակը ցույց է տալիս սեփական և փոխառու միջոցների հարաբերակցությունը, կամ այլ կերպ այս մեծությունը բնութագրում է փոխառու ֆինանսավորման՝ փոխառու միջոցների և բաժնետիրական կապիտալի մեծության հարաբերությունը:

Ներկայումս ՀՀ պաշտոնական վիճակագրության կողմից ընդունված է, որ ՀՀ արտաքին պարտքն իր մեջ ներառում է օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ՀՀ կառավարությանը և ՀՀ ԿԲ-ին տրամադրված վարկերը, ինչպես նաև այն վարկերը, որոնք տրամադրված են ՀՀ կառավարության և ՀՀ ԿԲ երաշխիքներով²: Իսկ ինչ վերաբերում է առևտրային կազմակերպությունների գործունեության ֆինանսական ցուցանիշներին, ապա այդ վիճակագրությունը ներառում է ՀՀ առևտրային կազմակերպությունների տնտեսական գործունեության, ինչպես նաև հաշվարկների վիճակի վեաբերյալ տեղեկությունները: Ըստ որում, տվյալների հավաքագրումն իրականացվում է ընտրանքային մեթոդով վիճակագրական մշտադիտարկման դաշտում ընդգրկված կազմակերպություններից պետական վիճակագրական հաշվետվությունների հավաքագրման միջոցով:

Ընդունված սահմանման համաձայն, դեբիտորական պարտքը կազմակերպությանը իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից (դեբիտորներից) վճարման ենթակա պարտքի գումարն է, որը ձևավորվել է վերջիններիս միջև տնտեսական փոխհարաբերությունների արդյունքում, իսկ կրեդիտորական պարտքը կազմակերպությունների կողմից ժամանկավորապես ներգրավված միջոցներն են, որոնք ենթակա են վերադարձման համապատասխան իրավաբանական կամ ֆիզիկական անձանց (կրեդիտոր-

² ՀՀ ֆինանսների վիճակագրություն. Վիճակագրական ժողովածու, եր., ՀՀ ԱԿԾ, 2015, էջ 8:

ներին)³: «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքը⁴ ընդունվել է 2008թ. մայիսի 26-ին, որը կարգավորում է ՀՀ պետական պարտքի հետ կապված հարաբերությունները: Որպես վերոնշյալ օրենքի նպատակ սահմանվել է պետական պարտքի կառավարման գործընթացի արդյունավետ և հրապարակային կազմակերպման ապահովումը: 2015թ.-ին «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքում կատարվեցին փոփոխություններ, ինչը պայմանավորված էր նշված օրենքի կիրարկման ընթացքում ի հայտ եկած մի շարք խնդիրների լուծման, բյուջետային գործընթացի շրջանակներում պետական բյուջեի դեֆիցիտի առավելագույն սահմանաչափը հստակեցնելու անհրաժեշտությամբ:

Վերոնշյալ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված սահմանափակումները վերաբերում են պետական պարտքին, մինչդեռ դրա կարգավորումներն առնչվում են բյուջետային գործընթացին: Պետական բյուջեի դեֆիցիտի առավելագույն սահմանաչափի նախատեսմամբ կարելի է կարգավորել միայն կառավարության կողմից պարտքային նոր պարտավորությունների ներգրավման հնարավորությունը: Կատարված փոփոխությունների ակնկալվող արդյունքը պետական պարտքին և կառավարության պարտքին առնչվող «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի հոդված 5-ի (պետական պարտքը) համաձայն. Պետական պարտքը կառավարության պարտքի և Կենտրոնական բանկի պարտքի հանրագումարն է: Եթե մինչև նշված օրենքի փոփոխությունը սահմանված էր, որ «Պետական պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 60 տոկոսը», ապա այդ փոփոխությունից հետո 6-րդ կետի շարադրանքը վերաբերեց միայն կառավարության պարտքին: Համանման փոփոխության ենթարկվեց նաև նշված օրենքի 7-րդ կետը և ըստ փոփոխված տարբերակի այն սահմանում է, որ «7. Եթե պետական պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ գերազանցում է Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 50 տոկոսը, ապա հաջորդ տարվա պետական բյուջեի դեֆիցիտը չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ի վերջին երեք տարիների ծավալների միջին ցուցանիշի 3 տոկոսը»: Դժվար չէ նկատել, որ կատարված փոփոխություններից հետո ՀՀ պետական պարտքի չափը կավելանա ՀՀ ԿԲ պարտքի մեծությամբ:

2. ՀՀ պետական պարտքը և առևտրային կազմակերպությունների պարտքային ճգնաժամը: Ցանկացած երկրում պարտքի հետ կապված հարաբերություններն ունեն զգալի ազդեցություն գործարարության միջավայրի ձևավորման և տնտեսական ակտիվության մակարդակի վրա: ՀՀ պե-

³ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2015, Եր., ՀՀ ԱՎԾ, 2015, էջ 372:

⁴ «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենք, ընդունված է 2008թ. մայիսի 26-ին:

տական պարտքի (ներքին և արտաքին) ցուցանիշները բերված են աղյուսակ 1-ում, ինչից հետևում է, որ 31.12.2015թ.-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը հատել է 5 մլրդ ԱՄՆ դոլարի սահմանագիծը և կազմել 5071.031 մլն դոլար (աճը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 514.349 մլն դոլար), որի 85.0%-ը բաժին է ընկել արտաքին պարտքին, իսկ 15%-ը՝ ներքին պարտքին: Հատկանշական է նաև, որ ներքին պարտքի զգալի բաժինը (86.9%-ը) կազմել են ՀՀ ռեզիդենտների կողմից ձեռք բերված պետական պարտատոմսերը:

Աղյուսակ 1. ՀՀ պետական պարտքը և դրա կազմը 2013-2015 թթ.


	31.12.2013	31.12.2014	31.12.2015	Փոփոխությունը
ՀՀ պետական պարտք	1861265,9	2109590,8	2453111,5	343520,7
այդ թվում՝	4588,467	4441,524	5071,031	629,511
Արտաքին պարտք	15811615,9	1797860,5	2084748,1	286887,6
այդ թվում՝	3899,063	3785,208	4309,557	524,349
ՀՀ կառավարության պարտք	1375441,8	1588895,8	1854320,3	265424,5
ՀՀ ԿԲ պարտք	3390,063	3345,255	3833,220	487,965
Ներքին պարտք	206174,1	208964,7	230427,8	21463,1
այդ թվում՝	508,269	439,953	476,337	36,384
ՀՀ ռեզիդենտների ձեռք բերած պետական պարտատոմսեր	279650,0	311730,3	368363,3	56633,0
ՀՀ ռեզիդենտների ձեռք բերած արտարժույթային պետ. պարտատոմսեր	689,404	656,316	761,475	105,159
Վարկեր և փոխառություններ	273506,0	289443,1	320019,5	30576,4
Ներքին երաշխիքներ	674,258	609,392	661,539	52,147
Փոխարկման համար կիրառված ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլար փոխարժեք	1906,5	19367,8	47382,3	28014,5
Վարկեր և փոխառություններ	4,700	40,777	97,948	57,171
Ներքին երաշխիքներ	3245,1	1899,9	0,0	-1899,9
Փոխարկման համար կիրառված ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլար փոխարժեք	8,000	4,000	0,000	-4,000
Ներքին երաշխիքներ	992,3	1019,5	961,5	-58,0
Փոխարկման համար կիրառված ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլար փոխարժեք	2,446	2,146	1,988	-0,158
Փոխարկման համար կիրառված ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլար փոխարժեք	405,64	474,97	483,75	8,78

Ծանոթագրություն. համարիչում՝ մլն դրամ, հայտարարում՝ մլն ԱՄՆ դոլար: Աղբյուրը. կազմվել և հաշվարկվել է՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2014թ. հունվար-դեկտեմբերին, Եր., ՀՀ ԱՎԾ, 2015, էջ 106, ԱՎԾ, 2016, էջ 106-ի տվյալների հիման վրա:

Պետք է նշել, որ 2000թ. ՀՀ պետական պարտք / ՀՆԱ ցուցանիշը կազմել է 49%, նվազելով 2008թ. հասել է նվազագույն մակարդակին (16%): Այն կտրուկ աճել է 2009թ. կազմելով 41%, որը 2014թ. կազմել է 43.6%⁵: ՀՀ մակրոտնտեսական այս կարևոր ցուցանիշի (պետական պարտքի) անբարենպաստ զարգացման համայնապատկերին (բավական է նշել, որ եթե 2013թ.-ին ՀՀ կառավարության պարտքի տոկոսավճարները կազմել են ՀՆԱ-ի

⁵ Հայաստանի Հանրապետության պետական պարտքը. տարեկան հաշվետվություն 2014, Եր., ՀՀ ֆինանսների նախարարություն, 2015, էջ 6:

1.09%, ապա 2014թ.-ին՝ 1.27%-ը)⁶ կարևոր նշանակություն է ձեռք բերում առևտրային կազմակերպությունների պարտքի կառուցվածքի և շարժի տվյալների ուսումնասիրությունը, և հանձնարարականների մշակումը:



Գծանկար 1. ՀՀ պետական պարտքի և պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշների դինամիկան⁷

Ինչպես հայտնի է առևտրային կազմակերպությունների պարտքերը բաժանվում են երկու խմբի: Դեբիտորական պարտքը (accounts receivable) կազմակերպությանը իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից (դեբիտորներից) վճարման ենթակա պարտքի գումարն է, որը ձևավորվել է վերջիններիս միջև տնտեսական փոխհարաբերությունների արդյունքում: Իսկ կրեդիտորական պարտքը (accounts payable) ժամանակավորապես ներգրավված միջոցներն են, որոնք ենթակա են վերադարձման իրավաբանական կամ ֆիզիկական անձանց (կրեդիտորներին)⁸: Աղյուսակ 2-ում բերված է ՀՀ կազմակերպությունների կրեդիտորական և դեբիտորական պարտքերի շարժը 1995-2014թթ., ինչից կարելի է եզրահանգել, որ.

➤ 2000 թվականին 1995 թվականի համեմատությամբ կրեդիտորական պարտքերն աճել են 424.4%-ով, դեբիտորական պարտքերը՝ 370.3%-ով, այսինքն կրեդիտորական պարտքերի «առաջանցման» գործակիցը դեբիտորական պարտքերի նկատմամբ կազմել է 1.146: Այդ ցուցանիշները 2005 թվականին 2000 թվականի համեմատությամբ կազմել են համապատասխանաբար՝ 62.8%, 73.7%, 0.852, 2010 թվականին 2005 թվականի համեմատությամբ համապատասխանաբար՝ 135.3%, 152.7%, 0.889, 2014 թվականին 2010 թվականի համեմատությամբ՝ 131.2%, 136.9%,

⁶ Նույն տեղում, էջ 29:

⁷ ՀՀ պետական պարտքը, Եր., ՀՀ ֆինանսների նախարարություն, 2015, էջ 6:

⁸ Հայաստանի վիճակագրական ժողովածու 2015, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 372:

0.958: Ընդհանուր առմամբ, 2014 թվականին 1995 համեմատությամբ այդ ցուցանիշները կազմել են 473.2%, 570.5%, 0.829:

➤ 1995-2014թթ. կրեդիտորական պարտքերի գերազանցումը դեբիտորականից կազմել է 963.1 մլրդ դրամ, դեբիտորական պարտքերի գերազանցումը կրեդիտորականից՝ 138.1 մլրդ դրամ, այսինքն նշված ժամանակահատվածում կրեդիտորական պարտքերի գերազանցումը՝ դեբիտորական պարտքերի գերազանցումը կրեդիտորականի գումարից կազմել է շուրջ 7 անգամ:

Բերված տվյալները վկայում են ՀՀ կազմակերպությունների միջև «պարտքային ճգնաժամի» խորացման մասին, որի դեպքում «բոլորը բոլորին» պարտք են: Նշվածի ապացույցն է նաև ժամկետանց կրեդիտորական պարտքերի գերազանցումը ժամկետանց դեբիտորական պարտքերի նկատմամբ 1995-2014թթ.-ին կազմել է -93.4 մլրդ դրամ (ըստ որում այդ մեծությունը 2012թ.-ին կազմել է -125.9 մլրդ դրամ, 2013 թվականին՝ -12.9 մլրդ դրամ, 2014 թվականին՝ -14.4 մլրդ դրամ), իսկ ժամկետանց դեբիտորական պարտքերը համապատասխանաբար՝ 7650.6 մլրդ դրամ, 558.0 մլրդ դրամ, 613.1 մլրդ դրամ, 663.2 մլրդ դրամ:

Աղյուսակ 2. ՀՀ խոշոր և միջին ոչ ֆինանսական առևտրային կազմակերպությունների կրեդիտորական և դեբիտորական պարտքերը, մլն դրամ

	1995	2000	2005	2010	2012	2013	2014	Ընդամենը
Կրեդ. պարտքեր	139731	592953	372441	503804.4	553547.4	602481.8	661145.5	8613659.0
որից՝ ժամկետանց	9770.0	118570	19506.0	523.7	743.7	822.5	1995.5	365245.2
Դեբ. պարտքեր	116248	430513	317207.0	484424.7	558013.5	613088.8	663200.5	7650581.3
որից՝ ժամկետանց	13356.0	33868.0	60279.0	2887.1	13334.5	13708.9	16377.0	365839.1
Կրեդ.պարտքերի գերազանցումը դեբիտորականից	23483.0	162440.0	55234.0	19379.7	-4466.1	-10606.5	-2055.0	963377.5
ժամկետանց կրեդիտ. պարտքի գերազանցումը ժամկետանց դեբիտ. պարտքի նկատմամբ	...	84702.0	-40773	-2363.4	-125908.0	-12886.4	-14381.5	-93440.1
Պարտքեր բանկերի և փոխառությունների գծով	1202819.6	1935534.5	1891425.7	2374998.1	10138018.8

Ծանոթագրություն. «...» - երևույթը բացակայում է: Աղբյուրը. կազմվել և հաշվարկվել է՝ ՀՀ վիճ. տարեգիրք 2015, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 393-395, ՀՀ վիճ. տարեգիրք 2014, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 396-398, ՀՀ վիճ. տարեգիրք 2011, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 403-406, ՀՀ վիճ. տարեգիրք 2007, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 383-385, ՀՀ վիճ. տարեգիրք 2004, Եր., ՀՀ ԱՎԾ, էջ 414-418, ՀՀ վիճ. տարեգիրք (1997, 1998), Եր., ՀՀ ԱՎԾ, 2001, էջ 366-369-ի տվյալների հիման վրա:

Բորիս ԱՎԱԳՅԱՆ

Պարտքի հիմնախնդիրը ՀՀ տնտեսության զարգացման արդի փուլում

Բանալի բառեր. վարկ, պետական պարտք, պարտքի մարում, ընթացիկ հաշիվ

Շուկայական տնտեսության առանցքային հասկացություններից է պարտքը, որ մասնագիտական գրականության մեջ ունի տարբեր մեկնաբանություններ: Այս եզրույթն ունի ինչպես մակրոտնտեսական, այնպես էլ միկրոտնտեսական նշանակություն և կիրառություն: Հեղինակը վերլուծել է ՀՀ պետական պարտքի և դրա կազմի մասին 2013-2015 թթ. ցուցանիշները: Հետազոտության արդյունքներով արված եզրահանգումներից մեկն այն է, որ առևտրային կառույցների պարտքային ճգնաժամի վերացման համար անհրաժեշտ է իրականացնել համապատասխան միջոցառումների ծրագիր:

Борис АВАКЯН

Проблема долгов на современном этапе развития экономики РА

Ключевые слова: долг; кредит; государственный долг; погашение долга; текущий счет.

Одним из основных проблем в рыночной экономике является долг, который по-разному интерпретируется в специальной литературе. Данное явление имеет как макроэкономическое, так и микроэкономическое значение и применение. Автор статьи проанализировал структуру и показатели государственного долга РА за период 2013-2015 годы, в статье особое внимание уделено также движению кредиторских и дебиторских долгов коммерческих организаций РА за 1995-2014 годы. По результатам исследования предлагается разработать и осуществить программу по разрешению долгового кризиса коммерческих организаций.

Boris AVAGYAN

The debt problem of the present stage of economic development

Key words: debt, credit, public debt, repayment of debt, current account

The key concepts of the market economy are the debt that has different interpretations in literature. This term has both a macroeconomic and microeconomic importance and application. The author analyzes situation on public debt and its composition for 2013-2015 years indicators. Special attention is paid to the movement of payables and receivables of RA organizations in 1995-2014. The conclusion of the research was done, according to which the RA commercial organizations are in a debt crisis, it is necessary to set up a program of appropriate measures to correct the situation.